ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍԼԱՎԻԿԻ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ 1920-1950-ԱԿԱՆ ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2023

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Մելքոնյան Աշոտ Աղասու

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խաչատրյան Կարեն Համլետի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սուքիասյան Համո Կարենի

Առաջատար կազմակերպություն՝ **Արցախի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2023 թ. մայիսի 30-ին, ժամը 13^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ. ապրիլի 17-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Պատմական ժողովրդագրությունն ուսումնասիրում է տարբեր ժամանակաշրջաններում որևէ տարածքի բնակչության զարգացման օրինաչափությունները և առանձնահատկությունները: Ժողովրդագրական գործընթացների բացահայտումն էական դեր է խաղում ցանկացած երկրի պատմության տարբեր դիտանկյունների ուսումնասիրման համար, քանի որ բնակչության թվաքանակը, տեղաշարժը և կազմը ուղղակիորեն ազդում են նրա տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային զարգացման վրա: Այս տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի[1] 1920-1950-ական թթ. ժողովրդագրական գործընթացների հետազոտությունը կարևորվում է վերջինիս խորհրդային ժամանակաշրջանի պատմական զարգացման ուսումնասիրության առումով:

Խորհրդային ժամանակաշրջանում Ադրբեջանի կողմից ԼՂԻՄ-ում իրագործվող ազգային-խտրական քաղաքականությունը դրսևորվում էր նաև մարզի ժողովրդագրական գործընթացներում: ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերի գիտական ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ինքնավար մարզի ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների, դրանց հետևանքների և ազդեցության, Խորհրդային Ադրբեջանի իրագործած հակահայ ժողովրդագրական քաղաքականության բացահայտման տեսանկյունից:

Ժողովրդագրական հիմնախնդիրները հիմնարար և ռազմավարական նշանակություն ունեն ցանկացած պետության համար, քանի որ այդօրինակ փոփոխությունները խորը և երկարաժամկետ ազդեցություն ունեն հասարակության տնտեսական և սոցիալական զարգացման վրա: Հատկապես 2020 թ. Արցախյան պատերազմից հետո Արցախի Հանրապետության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է նաև պետության ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և բնակչության թվաքանակի աճը: Այսօր չափազանց կարևոր է վերհանել և գնահատել Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական զարգացման պատմական ընթացքը, բովանդակությունը և միտումները: Այս առումով զգացվում է գիտական հետազոտությունների խիստ անհրաժեշտություն: Սույն հետազոտությունը կարևորվում է խորհրդային ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական զարգացման ընթացքի և առանձնահատկությունների ուսումնասիրության տեսանկյունից:

Ուսումնասիրության առարկան, նպատակը ու խնդիրները: Ուսումնասիրության առարկան ԼՂԻՄ ժողովրդագրական խնդիրներն են: Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերը և վեր հանել ուսումնասիրվող ժամանակաշրջանում դրանք պայմանավորող գործոնները: Հետազոտության գլխավոր խնդիրներն են.

- Բացահայտել ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրականացրած ժողովրդագրական քաղաքականությունը, դրա դրսևորումները և հետևանքները,

[1] Լեռնային Ղարաբաղը պատմաաշխարհագրական տարածաշրջան է, կազմում է Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան եզրը և Փոքր Կովկաս լեռնահամակարգի հարավ-արևելյան հատվածը: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) վարչատարածքային միավոր է, որը ձևավորվել է 1923 թ.՝ Լեռնային Ղարաբաղի տարածքի մի մասի վրա:

- Ներկայացնել քննարկվող ժամանակաշրջանում ԼՂԻՄ բնակչության թվաքանակը, տեղաբաշխումը, էթնիկական կազմը, սեռային կազմը, տարիքային կառուցվածքը,
- Անդրադառնալ ԼՂԻՄ բնակչության ծնելիության և մահացության խնդիրներին, ներքին և արտաքին տեղաշարժերին, դրանց հիմնական ուղղություններին,
- Ցույց տալ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական հատկանիշների փոխակերպումները,
- Պարզաբանել ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները,
- Բացահայտել ժողովրդագրական մի շարք գործընթացների փոխկապակցվածությունը մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացների հետ:

Ատենախոսության ժամանակագրական և տարածքային շրջանակը: Հետազոտության ժամանակագրական շրջանակը ընտրվել է՝ պայմանավորված պատմական այս ժամանակաշրջանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների առանձնահատուկ և կարևոր նշանակությամբ: Քննարկվող պատմաշրջանում սկզբնավորվել են մի շարք ժողովրդագրական գործընթացներ, որոնք շարունակական ընթացք են ունեցել Խորհրդային Ադրբեջանի կազմում ինքնավար մարզի գոյության ամբողջ ժամանակահատվածում: Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակի ստորին շեմը 1921 թ. է՝ պայմանավորված այդ թվականին ԼՂԻՄ-ում անցկացված գյուղատնտեսական մարդահամարով: Հետազոտության ժամանակաշրջանը թվագրվում է ներառյալ 1959 թ. համամիութենական մարդահամարը: Դա պայմանավորված է 1960-ական թթ. ԼՂԻՄ-ում ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող ժողովրդագրական քաղաքականության նոր՝ առավել ընդգծված հակահայկական քաղաքականության շրջափուլով, որը առանձին ուսումնասիրության առարկա է:

Հետազոտության տարածքային շրջանակը ներառում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը[2]՝ 1923-1959 թթ. վարչատարածքային սահմաններում: Այստեղ հետազոտության ժամանակագրական շրջանակի հետ նկատելի է որոշակի տարբերություն, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Լեռնային Ղարաբաղի մի մասի վրա ինքնավարություն ձևավորվել է 1923 թ., ինչից հետո տեղի են ունեցել նրա սահմանների ճշգրտումները: Գյուղատնտեսական մարդահամարը անցկացվել է 1921 թ., իսկ դրա արդյունքներն ինքնավար մարզի ձևավորումից հետո համապատասխանեցվել են վերջինիս տարածքային ընդգրկմանը:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունն իրականացվել է պատմաժողովրդագրական գիտակարգում կիրառվող մեթոդաբանության հիման վրա: Կիրառվել է ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտական մեթոդաբանություն: Հետազոտության քանակական մեթոդաբանական դիտանկյունը ներառում է բնակչության թվաքանակի, բնական աճի, սեռային կազմը և տարիքային կառուցվածքի վերաբերյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը:

---

[2] 1923-1936 թթ. Լեռնային Ղարաբաղի տարածքի մի մասի վրա ձևավորված ինքնավարությունը կոչվում էր «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Մարզ» (ԻԼՂՄ, ռուսերեն՝ «Автономная Область Нагорного-Карабаха» (АОНК)): 1936 թ. ԽՍՀՄ Սահմանադրությամբ «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Մարզը» վերանվանվեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ» (ռուսերեն՝ «Нагорно-Карабахская Автономная Область» (НКАО)): Սույն աշխատանքում ինքնավարության ամբողջ ժամանակաշրջանի համար օգտագործված է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ) անվանաձևը՝ հաշվի առնելով, որ այն համընդհանուր ճանաչում և կիրառում ունի մասնագիտական գրականությունում:

Մեթոդաբանության որակական դիտանկյունն ենթադրում է քանակական տվյալների վերլուծություն, դրանց ընդհանրությունների և առանձնահատկությունների վերհանում, պատճառների ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունում կիրառվել են ժողովրդագրական գործընթացների վերլուծության վիճակագրական և մաթեմատիկական մեթոդները: Վիճակագրական վերլուծության մեթոդն ընդգրկում է ժողովրդագրական գործընթացների մասին տեղեկատվության հավաքագրումն ու հաշվարկումը, ստացված տվյալների մշակումը: Այն օգտագործվել է ԼՂԻՄ բնակչության թվաքանակի, ծնելիության, մահացության, տեղաշարժերի, սեռատարիքային կազմի ուսումնասիրելու, դրանց ցուցանիշների կապը որոշակի գործոնների հետ բացահայտելու համար:

Ժողովրդագրական գործընթացների վերլուծության մաթեմատիկական մեթոդներն ենթադրում են տարբեր մաթեմատիկական մոդելների մշակում և օգտագործում՝ ժողովրդագրական գործընթացների զարգացման օրինաչափությունների վերլուծության համար: Սույն հետազոտությունում մաթեմատիկական մեթոդները կիրառվել են բնակչության թվաքանակի, աճման տեմպերի, սեռատարիքային կազմի, դրանց հարաբերակցության, տեսակարար կշիռների ուսումնասիրության, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշները նախորդ մարդահամարների տվյալների հետ համեմատելու նպատակով:

Հետազոտության նպատակներին և խնդիրներին համապատասխան ատենախոսությունում օգտագործվել է վերլուծական-քննական մեթոդը՝ արխիվային մի շարք փաստաթղթերի, մասնագիտական գրականության տեղեկությունների ուսումնասիրության ժամանակ:

Նկարագրական մեթոդի միջոցով ներկայացվել են ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող ռազմաքաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական գործոնները, բնակչության հիմնական ժողովրդագրական հատկանիշները: Հետազոտությունում օգտագործվել է նաև վիճակագրական տվյալների վիզուալացման գծանկարային մեթոդը:

Աշխատությունում կիրառվել են նաև համադրության (սինթեզի), ընդհանրացման, համակարգման, ինդուկցիայի և դեդուկցիայի, ժամանակագրական մեթոդները, պատմականության սկզբունքը:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը

Հետազոտության գիտական նորույթը հետևյալն է.

- ԼՂԻՄ-ի ժողովրդագրական պատկերը որպես պատմական հետազոտության առարկա դիտարկվում է առաջին անգամ,
- Հետազոտական թեման ուսումնասիրվել է պատմական և ժողովրդագրական մեթոդների համակցությամբ,
- Բացահայտվել են ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները, դրանց ազդեցությունները և հետևանքները,
- Բացահայտվել են ԼՂԻՄ ժողովրդագրական հատկանիշների փոխառնչությունները մարզի սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացների հետ,
- Հայտնաբերվել և գիտական շրջանառության մեջ են դրվել ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացների վերաբերյալ նոր վիճակագրական տվյալներ և տեղեկություններ,
- Բացահայտվել է ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրագործած ժողովրդագրական քաղաքականությունը և դրա գործիքակազմը:

Աշխատության գործնական նշանակությունը հետևյալն է

- Հետազոտության արդյունքները Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար պատմաքաղաքական հարթությունում փաստարկներ են՝ ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի էթնիկ փոխակերպման քաղաքականության և նրա գործիքակազմի բացահայտման համար:
- Հետազոտության հիմնադրույթների օգտագործում թեմային առնչվող հետազոտություններում, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի պատմության և ժողովրդագրության վերաբերյալ աշխատություններում, ընդհանուր և հատուկ համալսարանական դասընթացներում, մասնագիտական և ոչ մասնագիտական դասագրքերում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածությունը: Հետազոտական թեմայի աղբյուրագիտական հիմքը բաժանվում է երկու մասի՝ առաջնային կամ հիմնական և երկրորդային կամ օժանդակ: Առաջնային են համարվում վիճակագրական ուղղակի տվյալները և դրանց հիման վրա կատարված հաշվարկային ցուցանիշները: Դրանք ներառում են բնակչության վիճակագրությունների, մարդահամարների արդյունքները, վիճակագրական տարեգրքերի և ժողովածուների, ինչպես նաև արխիվային վիճակագրական փաստաթղթերի տվյալները: Աշխատության համար ուղենշային սկզբնաղբյուրներ են համամիութենական 1926, 1939 և 1959 թթ. մարդահամարների տպագիր արդյունքները[3]: Դրանք աշխատությունում օգտագործվել են ԼՂԻՄ բնակչության ազգային կազմը, տեղաբաշխումը, սեռատարիքային կազմն ու քննարկվող ժամանակաշրջանում դրանց փոխակերպումները ներկայացնելու համար:

Տպագիր վիճակագրական սկզբնաղբյուրների շարքին են դասվում նաև Խորհրդային Ադրբեջանի կենտրոնական վիճակագրական վարչության տեղեկագրերը[4]: Դրանք կարևոր տվյալներ են պարունակում ԼՂԻՄ բնակչության թվաքանակի, դրա փոփոխությունների և տեղաբաշխման մասին:

Հետազոտության համար արժեքավոր են էլեկտրոնային աղբյուրները: Մասնավորապես ԼՂԻՄ ժողովրդագրական մի շարք հատկանիշների (բնակչության տեղաբաշխում ըստ վարչական շրջանների և ազգությունների, բնակչության սեռային կազմ, տարիքային կառուցվածք) մանրամասն ուսումնասիրության համար առանձնահատուկ կարևորություն

---

[3] Տե՛ս Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Краткие сводки: Выпуск III: Население СССР, Москва, Издание ЦСУ СОЮЗА ССР, 1927; Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Краткие сводки: Выпуск IV: Народность и родной язык населения СССР, Москва, Издание ЦСУ СССР, 1928; Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Краткие сводки: Выпуск VII: Возраст и грамотность населения СССР, Москва, Издание ЦСУ СОЮЗА ССР, 1928; Численность населения СССР на 17 января 1939 г.: По районам, районным центрам, городам, рабочим поселкам и крупным сельским населенным пунктам: По данным Всесоюзной переписи населения 1939 г., Москва, Госпланиздат, 1941; Всесоюзная перепись населения 1939 года: Основные итоги, Москва, Наука, 1992; Численность население СССР по переписи на 15 января 1959 года по республикам, краям, областям, национальным округам, районам, городам, поселкам городского типа, районным центрам и крупным сельским населенным местам (По административно-территориальному делению на 1 января 1960 г.), Москва, 1960, ՀԱԱ, ֆ. 163, ց. 144, գ. 24; Уровень образования, национальный состав, возрастная структура и размещение населения СССР по республикам, краям и областям: По данным всесоюзной переписи населения 1959 года, Москва, Госстатиздат ЦСУ СССР, 1960; Итоги Всесоюзной переписи населения 1959 года. Азербайджанская ССР, Москва, Госстатиздат, 1962.

[4] Տե՛ս Известия Азербайджанского Центрального Статистического Управления, Баку, 1923, № 1 (7); Бюллетень Азербайджанского Центрального Статистического Управления, Баку, 1926, № 1 (6); № 6 (11); 1927, № 1.

ունեն «Демоскоп Weekly» ժողովրդագրական էլեկտրոնային ամսագրի կայքում Ռուսաստանի Դաշնության տնտեսության պետական արխիվի փաստաթղթերի հիման վրա ներկայացված տվյալները[5]:

Արժեքավոր են նաև Հայաստանի Ազգային և Արցախի Հանրապետության պետական արխիվներում պահպանվող վիճակագրական փաստաթղթերը[6]: Դրանք պարունակում են ԼՂԻՄ բնակչության թվաքանակի, տեղաբաշխման, բնական աճի և այլ ժողովրդագրական հատկանիշների մասին կարևոր վիճակագրական տվյալներ և տեղեկություններ: Սկզբնաղբյուրային նշանակություն ունեն ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի ժողովրդագրական քաղաքականության դրսևորումները բացահայտող և ժողովրդագրական գործընթացներին առնչվող Արցախի Հանրապետության պետական արխիվում պահպանվող փաստաթղթերը[7]:

Օգտագործվել են սկզբնաղբյուրային արժեք ունեցող այլ վիճակագրական տարեգրքեր և ժողովածուներ[8]:

---

[5] Տե՛ս Всесоюзная перепись населения 1926 г. Белорусская, Украинская, Закавказская, Узбекская, Туркменская республики и их основные регионы. Населенные места. Наличное городское и сельское население. АО Нагорного Карабаха, http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_26_b.php?reg=77; Всесоюзная перепись населения 1926 года. Возрастной состав населения союзных республик и их регионов. Азербайджанская ССР/АО Нагорного Карабаха, http://www.demoscope.ru/weekly/ssp/sng_reg_age_26.php?reg=58&Submit=OK; Всесоюзная перепись населения 1939 года. Национальный состав населения районов, городов и крупных сел союзных республик СССР. Азербайджанская ССР. Нагорно-Карабахская Авт. Обл., http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_39_ra.php?reg=760; Всесоюзная перепись населения 1939 г. Распределение городского и сельского населения областей союзных республик по национальности и полу, Азербайджанская ССР: Нагорно-Карабахская Авт. Обл. Городское и сельское население, http://www.demoscope.ru/weekly/ssp/rer_nac_39_gs.php?reg=25&gor=3&Submit=OK; Всесоюзная перепись населения 1939 г. Возрастной состав населения областей, автономных республик, автономных областей и округов союзных республик кроме РСФСР. Азербайджанская ССР. Нагорно-Карабахская Авт. Обл., http://www.demoscope.ru/weekly/ssp/rer_nac_39_gs.php?reg=25&gor=3&Submit=OK; Всесоюзная перепись населения 1959 г. Численность городского населения союзных республик (кроме РСФСР), их территориальных единиц, городских поселений и городских районов по полу, http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr59_reg2.php; Всесоюзная перепись населения 1959 г. Численность сельского населения союзных республик (кроме РСФСР), жителей сельских населенных пунктов-районных центров по полу, http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr59_reg3.php; Всесоюзная перепись населения 1959 года. Городское и сельское население областей республик СССР (кроме РСФСР) по полу и национальности. Нагорно-Карабахская АО, http://www.demoscope.ru/weekly/ssp/resp_nac_59.php?reg=67 (доступно 15.09.22).

[6] Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 116; ֆ. 150, ց. 1, գ. 22; ֆ. 163, ց. 23, գ. 19; ֆ. 200, ց. 1, գ. 443; Արցախի Հանրապետության պետական արխիվ (այսուհետ՝ ԱՀ պետարխիվ), ֆ. 3, ց. 1, գ. 19; ֆ. 142, ց. 4, գ. 90:

[7] Տե՛ս ԱՀ պետարխիվ, ֆ. 3, ց. 1, գ. 10; ֆ. 250, ց. 10, գ. 13:

[8] Տե՛ս Закавказье. Советские республики: Азербайджан, Армения, Грузия, Абхазия, Аджаристан, Юго-Осетия, Наг. Карабах, Нахичевань. Статистико-экономический сборник, Тифлис, Издание Высшего Экономического Совета, 1925; Нагорный Карабах за годы советской власти (Краткая статистическая сборник), Степанакерт, Статуправление НКАО, 1969; Достижения Советского Нагорного Карабаха за 40 лет в цифрах. Статистический сборник, Степанакерт, Статистическое Управление Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР, 1963; Советский Азербайджан за 50 лет. Статистический сборник, Баку, Азербайджанское Государственное Издательство, 1970; Нагорный Карабах за 50 лет (1923-1973 гг.), Степанакерт, Статуправление Нагорно-Карабахской Автономной Области, 1974; Народное хозяйство Азербайджанской ССР к 60-летию Великого Октября. Юбилейный статистический ежегодник, Баку, Азербайджанское Государственное Издательство, 1977.

Օժանդակ սկզբնաղբյուրներ են առաջնային աղբյուրների հիման վրա կատարված ուսումնասիրությունները: Դրանք ընդգրկում են տարբեր հեղինակների աշխատություններ, մասնագիտական ժողովրդագրական հետազոտություններ: Հետազոտական թեմայի ուսումնասիրության տեսանկյունից այս խմբի մեջ հարկ է առանձնացնել Գ. Քոչարյանի[9] և Մ. Կարապետյանի[10] աշխատությունները: Գ. Քոչարյանն իր աշխատությունում ներկայացնում է ԼՂԻՄ 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարի արդյունքները՝ ըստ ԼՂԻՄ վարչական միավորների: Պայմանավորված ԼՂԻՄ սահմանների փոփոխություններով՝ նա կատարել է մի շարք ճշգրտումներ մարդահամարի արդյունքներում: Հեղինակը կարևորագույն տեղեկություններ է հաղորդում 1920-ական թթ. սկզբներին ԼՂԻՄ բնակչության թվաքանակի, տեղաբաշխման, սեռատարիքային կազմի մասին:

Մ. Կարապետյանի գրքույկը ներկայացնում է 1921 թ. մարդահամարի արդյունքները՝ ըստ ԼՂԻՄ գյուղերի և վերջիններիս ազգային կազմի: Այն արժեքավոր աղբյուր է հանդիսանում ԼՂԻՄ էթնիկ պատկերի, բնակչության տեղաբաշխման ուսումնասիրության համար:

Հիշատակելի է նաև Գ. Սեյրանի[11] աշխատությունը, որը թեև հիմնականում նվիրված է ԼՂԻՄ տնտեսական դրությանը, սակայն կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև 1920-ական թթ. ինքնավար մարզի բնակչության թվաքանակի, տեղաշարժերի վերաբերյալ և հնարավորություն է տալիս բացահայտել մի շարք ժողովրդագրական գործընթացներ:

Խորհրդային ժամանակաշրջանի ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացների վերաբերյալ վիճակագրական արժեքավոր տվյալներ է պարունակում Կ. Մամեդովի աշխատությունը[12], որը նվիրված է Խորհրդային Ադրբեջանի ժողովրդագրական գործընթացների վերլուծությանը:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում համամիութենական ժողովրդագրական գործընթացների, խորհրդային մարդահամարների կազմակերպման, իրականացման պատմության ուսումնասիրության առումով կարևորվում են Ե. Անդրեևի, Լ. Դարսկիի, Տ. Խարկովայի[13], Ն. Վորաբյովի[14], Վ. Ժիրոմսկայայի, Ի. Կիսելևի, Յու. Պոլյակովի[15] աշխատությունները:

Հիմնահարցի գիտական ուսումնասիրվածությունը: Խորհրդային ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացներն ուսումնասիրության առարկա չեն դարձել: Հետազոտական թեմայի վերաբերյալ գիտական հետաքրքրությունը մեծացավ հատկապես Արցախյան շարժման ժամանակաշրջանում: Հիմնականում ուշադրության կենտրոնում էր

---

[9] Տե՛ս Кочарян Г., Нагорный Карабах, Баку, Общества обследования и изучения Азербайджана, 1925.

[10] Տե՛ս Карапетян М., Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г.: (По сельско-хозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, Типография исполькома Ергорсовета, 1991.

[11] Տե՛ս Սեյրան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը և նրա հեռանկարները (Տնտեսական աշխարհագրություն), Թիֆլիս, Ա. հ., 1928:

[12] Տե՛ս Мамедов К., Население Азербайджанской ССР за 60 лет, Баку, Азербайджанское Государственное Издательство, 1982.

[13] Տե՛ս Андреев Е., Дарский Л., Харькова Т., Население Советского Союза 1922-1991, Москва, Наука, 1993.

[14] Տե՛ս Воробьев Н., Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г.: Краткий обзор организации и производства, Москва, В/О Союзоргучет, 1938; Воробьев Н., Всесоюзная перепись населения 1926 года. 2-е изд., Москва, Госстатиздат, 1957.

[15] Տե՛ս Жиромская В., Киселев И., Поляков Ю., Полвека под грифом: Секретно: Всесоюзная перепись населения 1937 года, Москва, Наука, 1996; Жиромская В., Поляков Ю., Всесоюзная перепись населения 1937 года: Общие итоги: Сборник документов и материалов, Москва, Российская политическая энциклопедия, 2007.

խորհրդային տարիներին մարզի էթնիկ կազմի փոխակերպման գործընթացը: Այս առումով հիշատակելի են Ս. Մելքումյանի և Ի. Մուրադյանի անտիպ հոդվածները Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի հայ բնակչության մասին, որոնք պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի Արցախյան շարժման ֆոնդում: Ս. Մելքումյանն[16] իր հոդվածում ներկայացնում է խորհրդային ժամանակաշրջանում ԼՂԻՄ էթնիկ կազմի, բնական աճի, տարիքային կազմի վերաբերյալ վիճակագրական տվյալները, Ադրբեջանի խտրական քաղաքականության դրսևորումներն ինքնավար մարզի գյուղատնտեսության, արդյունաբերության, կրթամշակութային ոլորտներում: Ի. Մուրադյանն[17] իր հոդվածում ներկայացնում է ինքնավար մարզի հայ և ադրբեջանական բնակչության հակադիր աճման վիճակագրական տվյալները, վերլուծում բնակչության միգրացիոն գործընթացների ազդեցությունը մարզի բնական աճի վրա:

ԼՂԻՄ բնակչությանը նվիրված հրապարակումներից պետք է առանձնացել Հ. Սարգսյանի[18] հոդվածը, որը ժամանակագրական առումով միայն մասամբ է վերաբերում սույն հետազոտական թեմային: Այստեղ հեղինակը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակի, տեղաբաշխման, էթնիկ կազմի փոխակերպումները, վերլուծում ժողովրդագրական գործընթացների պատճառները 1823-1923 թթ.:

Ժողովրդագրական բնույթի աշխատություններից կարևոր է Վլ. Խոջաբեկյանի[19] մենագրությունը: Այն նվիրված է Հայաստանի ժողովրդագրական զարգացման պատմությանը, հիմնական միտումներին և առանձնահատկություններին: Աշխատությունում հեղինակը խիստ համառոտ կերպով անդրադառնում է նաև ԼՂԻՄ 1920-1940-ական թթ. ժողովրդագրական գործընթացներին:

Նշենք, որ ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացներին և այն պայմանավորող գործոններին անդրադարձ է կատարվել հիմնականում պատմագիտական հետազոտություններում: Վ. Բալայանն[20] արխիվային նյութերի, պարբերական մամուլի հրապարակումների, տպագիր սկզբնաղբյուրների և պատմագիտական աշխատությունների հիման վրա մի շարք արժեքավոր դիտարկումներ է կատարում քննարկվող ժամանակաշրջանի ԼՂԻՄ ժողովրդագրական հատկանիշների, ինչպես նաև ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների վերաբերյալ: Սույն ատենախոսությունում վերջինիս աշխատությունը հատկապես կարևորվում է ԼՂԻՄ-ում Ադրբեջանի կողմից իրագործած ժողովրդագրական քաղաքականության փաստագրման և վերլուծության տեսանկյունից:

---

[16] Տե՛ս Мелкумян С., Нагорно-Карабахская Армянская Автономная Область. Справка, ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 64, թթ. 1-7:

[17] Տե՛ս Мурадян И., О демографической развитии Нагорно-Карабайской АО, Нахичеванской АССР и других армянских районов, находящихся в пределах Азербайджанской ССР (за период 1921-1986 гг.), նույն տեղում, ֆ. 1159, ց. 3, գ. 64, թթ. 17-23:

[18] Տե՛ս Саркисян Г., Население Нагорного Карабаха за 100 лет (1823-1923 гг.) (Этнодемографическое исследование), «Հայագիտության հարցեր», 2016, № 2, с. 59-81.

[19] Տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում-XXI դարի շեմին, Գիտություն հրատարակչություն, Երևան, 2001:

[20] Տե՛ս Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, Սոնա հրատարակչություն, 2012:

Շ. Մկրտչյանի[21] աշխատությունը սույն հետազոտության համար նույնպես արժևորվում է ԼՂԻՄ-ի նկատմամբ Ադրբեջանի խտրական ազգային քաղաքականության տարբեր դիտանկյունների բացահայտման տեսանկյունից: Որպես նկարագրված դեպքերի մի մասի ժամանակակից հեղինակ՝ Շ. Մկրտչյանի դիտարկումները հնարավորություն են տալիս բացահայտելու ինքնավար մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող մի շարք գործոններ: ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի վարած ազգային խտրական քաղաքականության բացահայտման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նաև Շ. Աբրահամյանի[22], Բ. Ուլուբաբյանի[23] աշխատությունները:

Հ. Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» շարքի երկրորդ գիրքը[24] կարևորագույն ուսումնասիրություն է քննարկվող ժամանակաշրջանում ԼՂԻՄ հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացման առանձնահատկությունների վերլուծության համար: Քննարկվող ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների բացահայտման տեսանկյունից կարևորվում են նաև Ա. Կիսիբեկյանի հուշագրությունը[25], Վ. Ղազարյանի[26] հոդվածները, Հ. Խառատյանի[27] աշխատությունը:

ԼՂԻՄ ձևավորման, տարածքային ընդգրկման, դրա հետագա կրճատումների, սահմանային փոփոխությունների և վերաձևումների ուսումնասիրության առումով արժեքավոր է Կ. Խաչատրյանի, Հ. Սուքիասյանի, Գ. Բաղալյանի կոլեկտիվ մենագրությունը[28]: Այն հարուստ փաստական հիմքի վրա ներկայացնում է 1920-1930-ական թթ. Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի սահմանների ձևավորման ընթացքը, վերջիններիս տարածքային կորուստները:

ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրականացրած ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականության, դրա իրագործման գործիքակազմի հետազոտման համար կարևոր են Ջ. Մակգարիի[29] հոդվածը և Մ. Ջ. Բուքմանի[30] աշխատությունը: Ջ. Մակգարին իր հոդվածում

---

[21] Տե՛ս Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղ: Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, Ազատ Արցախ հրատարակչություն, 2003:

[22] Տե՛ս Աբրահամյան Շ., Ազգային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տարիներին, Երևան, Հայաստան հրատարակչություն, 2003:

[23] Տե՛ս Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, Մ. Վարանդեան հրատարակչություն, 1994:

[24] Տե՛ս Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը. Գիրք Բ. 1923-1985, Երևան, Զանգակ, 2005:

[25] Տե՛ս Կիսիբեկյան Ա., Հուշեր, հատոր 1, հատոր 2, Երևան, Առասպել, 2011:

[26] Տե՛ս Газарян В., Об участии армян НКАО и Азербайджана в Великой Отечественной войне, Центр поддержки русско-армянских стратегических и общественных инициатив, 6 мая 2021, https://russia-armenia.info/node/75368; Газарян В., Имела ли место депортация азербайджанцев из Армении в советские годы?, Regnum, 12 мая 2013, https://regnum.ru/news/society/1657402.html; Газарян В., Депортация армян из НКАО и Азербайджана в июне 1949 года. Независимое исследование, Центр поддержки русско-армянских стратегических и общественных инициатив, 15 июня 2017, https://russia-armenia.info/node/39452 (доступно 15.09.22).

[27] Տե՛ս Харатян Г., Выселение армян «навечно» 1949 года. Анализ и архивные документы (К 70-летию этнической депортации армян), Ереван, Издательство Института Археологии и Этнографии, 2020.

[28] Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2015:

[29] Տե՛ս McGarry J., “Demographic Engineering”: The State-Directed Movement of Ethnic Groups as a Technique of Conflict Regulation, “Ethnic and Racial Studies”, 1998, № 21 (4), pp. 613-638, https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/014198798329793 (accessed 15.09.22).

քննարկում է էթնիկ խմբերի պետականորեն ուղղորդված շարժումները, դրանց պատճառները, իրագործման ձևերը: Մ. Զ. Բուքմանն իր ուղենշային աշխատությունում մանրամասն ներկայացնում է ժողովրդագրական ինժեներիայի բնութագրական հատկանիշները, իրագործման հիմնական եղանակաձևերը:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են նաև ժամանակի պարբերական մամուլի («Խորհրդային Ղարաբաղ», «Խորհրդային Հայաստան», «Դրոշակ») թեմային առնչվող հրապարակումները:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթների մի մասը փորձաքննություն է անցել «Հայոց պետականության անցյալը, ներկան և ապագան» միջազգային երիտասարդական երրորդ և չորրորդ գիտաժողովներում, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների XLI և XLII գիտական նստաշրջաններում: Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները հրապարակվել են վեց գիտական հոդվածների տեսքով:

Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի կողմից:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից: Աշխատանքի ծավալը 184 էջ է:

Ներածությունում հիմնավորվում է հետազոտական թեմայի արդիականությունը, ներկայացվում է հետազոտության առարկան, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և տարածքային շրջանակը, մեթոդաբանությունը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, վերլուծվում է հետազոտական թեմայի աղբյուրագիտական հիմքը, գիտական ուսումնասիրվածության աստիճանը:

Ատենախոսության առաջին՝ **«Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. առաջին կեսին»** գլխում ներկայացված է Լեռնային Ղարաբաղի բնակչության ժողովրդագրական հատկանիշները ըստ 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարի տվյալների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնները 1920-ական թթ. առաջին կեսին:

1920-ական թթ. սկզբներին վիճակագրական գործը Խորհրդային Ադրբեջանում դեռևս գտնվում էր ձևավորման փուլում: Այդ հանգամանքով պայմանավորված՝ 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարին բնութագրական էր կազմակերպական և բովանդակային թերությունները: Դրանց գումարվում են նաև վիճակագրության իրականացման ժամանակ և հետագայում Ադրբեջանի տարբեր վարչամիավորների տարածքային-սահմանային խնդիրները, սահմանային վերաձևումները և դրանցով պայմանավորված անճշտությունները վիճակագրական տվյալներում: Համաձայն 1921 թ. մարդահամարի տվյալների՝ ԼՂԻՄ[31] առկա գյուղական բնակչությունը կազմել է 129243 մարդ: Էթնիկ պատկանելիությամբ բնակչության ազգային կազմը գրեթե ամբողջապես միատարր

---

[30] Տե՛ս Bookman Z. M., The Demographic Struggle for Power: The Polotical Economy of Demographic Engineering in the Modern World, London and New York, Routledge, 1997.

[31] Հետազոտությունում 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարի արդյունքները ներկայացնելիս կիրառվել է ԼՂԻՄ անվանաձևը: Ինչպես նշվել է, թեև ԼՂԻՄ-ը 1921 թ. դեռևս ձևավորված չէր, սակայն մարդահամարի անցկացումից հետո դրա արդյունքները համապատասխանեցվել են ԼՂԻՄ տարածքային ընդգրկմանը:

հայկական էր։ Հայ բնակչությունը կազմում էր գյուղական բնակչության 94.7%-ը (122426 մարդ)։ Թվաքանակով երկրորդ էթնիկ հանրույթը թյուրք-ադրբեջանցիներն էին՝ բնակչության 5.1%-ը (6550 մարդ), իսկ այլէթնիկ հանրույթները կազմում էին գյուղական բնակչության 0.2%-ը (267 մարդ)։

1920-ական թթ. առաջին կեսին Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոններն էին մարզի սոցիալ-տնտեսական ծանր դրության հետևանքով սկզբնավորված լայնածավալ արտագաղթը, թյուրք բնակչության շրջանում տարածված (կիսա)քոչվորական կացութաձևը և ադրբեջանական իշխանությունների ժողովրդագրական քաղաքականության դրսևորումները։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում երկրամասի տնտեսությունը գտնվում էր քայքայված վիճակում, ինչը հանգեցնում էր աշխատունակ վերարտադրողական տարիքի գյուղական, գերազանցապես հայ բնակչության լայնածավալ արտագաղթի։ Թյուրք-ադրբեջանցիների շրջանում տարածված էր (կիսա)քոչվորական կենցաղավարությունը, որը, կախված վիճակագրության իրականացման ժամանակահատվածից, ազդեցություն էր ունենում ԼՂԻՄ բնակչության թվաքանակի և էթնիկ կազմի վրա։ 1920-ական թթ. սկզբներին Խորհրդային Ադրբեջանի վարչատարածքային տարաբնույթ փոփոխությունների հետևանքով զգալիորեն կրճատվեց հայկական ինքնավարության տարածքը, բացառվեց Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի անմիջական սահմանակցությունը, ինքնավար մարզի կենտրոնը Շուշիից տեղափոխվեց Ստեփանակերտ, խոչընդոտվեց հայ բնակչության վերադարձը Շուշի քաղաք։ Շուշիի շրջանում ադրբեջանական իշխանություններն իրագործում էին տնտեսական զարգացման մի շարք ծրագրեր։

Ատենախոսության երկրորդ՝ **«Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. երկրորդ կեսին-1930-ական թթ.»** գլխում ներկայացված են ԼՂԻՄ բնակչության ժողովրդագրական հատկանիշներն ըստ 1926 թ. և 1939 թ. համամիութենական մարդահամարների տվյալների, ինչպես նաև ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները 1920-ական թթ. երկրորդ կեսին-1930-ական թթ.։

1926 թ. մարդահամարի արդյունքներով ԼՂԻՄ առկա բնակչությունը կազմում էր 125300 մարդ, որից 93.4%-ը (117007 մարդ)՝ գյուղական, իսկ 6.6%-ը (8293 մարդ)՝ քաղաքային բնակչությունն էր։ Մարզի ամբողջ բնակչության 89.1%-ը (111694 մարդ) կազմում էր հայ բնակչությունը, 10%-ը (12592)՝ թյուրքերը, 0.5%-ը (596 մարդ)՝ ռուսները, 0.3%-ը (418 մարդ)՝ այլէթնիկ հանրույթները։ 50.4%-ը (63131 մարդ) կազմում էր արական, իսկ 49.6%-ը (62169 մարդ)՝ իգական բնակչությունը։ ԼՂԻՄ բնակչության 44.6%-ը մինչև 15 տարեկան էր, 44.7%-ը՝ 15-59 տարիքային խմբից էր (չափահաս բնակչություն), իսկ 10.5%-ը՝ տարեց բնակիչներն էին (60 և ավելի)։

1920-ական թթ. երկրորդ կեսին-1930-ական թթ. ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերը պայմանավորող համամիութենական գործոնների շարքում հարկ է առանձնացնել կոլեկտիվացման ու արդյունաբերացման գործընթացները, ինչպես նաև 1930-ական թթ. բռնաճնշումները։ Ինքնավար մարզում կոլեկտիվացման գործընթացը լայն թափով ծավալվեց 1920-ական թթ. երկրորդ կեսից՝ իր գագաթնակետին հասնելով 1929-1930 թթ.։ Մի շարք բնակավայրերում գործընթացը հանդիպեց գյուղացիների դիմադրությանը, փորձ արվեց վարչարարական եղանակով համատարած և հապշտապ ավարտել կոլեկտիվացումը։ Դա հանգեցրեց բռնությունների, բախումների, գյուղացիների մի մասի արտահոսքի դեպի

քաղաքային բնակավայրեր։ Արդյունաբերացման գործընթացը մարզում արտահայտվեց էներգետիկ հզորությունների կառուցմամբ, մետաքսագործարանային, գինու և սպիրտի արտադրության ծավալմամբ և այս ոլորտում տնտեսական ցուցանիշների բարելավմամբ։ Արդյունաբերացումը նպաստեց ինքնավար մարզում քաղաքային բնակչության ավելացմանը։ Մարզն անմասն չմնաց նաև 1930-ական թթ. Խորհրդային Միությունում ծավալվող քաղաքական բռնաճնշումներից, որոնք զուգորդվեցին ազգային ճնշումներով՝ խթանելով հայ բնակչության արտագաղթը։

Քննարկվող ժամանակաշրջանում ինքնավար մարզի ժողովրդագրական գործընթացների վրա կարևոր ազդեցություն ունեին Խորհրդային Ադրբեջանի կողմից շարունակվող ժողովրդագրական քաղաքականության դրսևորումները։ Մասնավորապես մարզի մի շարք բնակավայրեր բռնակցվեցին հարևան ադրբեջանական վարչամիավորներին, լայնածավալ աշխատանքներ իրականացվեցին թյուրք բնակչության շրջանում նստակեցության հաստատման և թյուրքական բնակավայրերի ձևավորման, վերջիններիս սոցիալ-տնտեսական աջակցության տրամադրման ուղղությամբ։ Միաժամանակ Միլի ու Մուղանի հարթավայրերը տնտեսապես յուրացնելու «պատճառաբանությամբ» իրականացվում էր հայ բնակչության վերաբնակեցումներ վերոհիշյալ շրջաններում, իսկ 1930-ական թթ. սկզբներից՝ աշխատուժի պակասի «հիմնավորմամբ» մարզի հայ բնակչության հավաքագրումներ՝ Ադրբեջանի քաղաքներում աշխատանքի ուղարկելու համար։

1939 թ. մարդահամարի արդյունքներով ԼՂԻՄ առկա բնակչության թվաքանակը կազմում էր 150837 մարդ, որից գյուղական բնակչությունը կազմում էր 89.5% (134954 մարդ), իսկ քաղաքային բնակչությունը՝ 10.5% (15883 մարդ)։ Ինքնավար մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 88%-ը (132800 մարդ) կազմում էին հայերը։ Երկրորդ մեծաթիվ էթնիկ հանրույթն ադրբեջանցիներն էին (9.3% կամ 14053 մարդ), ապա ռուսները՝ (2.1 % կամ 3174 մարդ)։ Այլէթնիկ հանրույթները կազմում էին բնակչության 0.5 %-ը (810 մարդ)։ Բնակչության 51%-ը (76745 մարդ) կազմում էր արական, իսկ 49%ը (74092 մարդ)՝ իգական սեռի ներկայացուցիչները։ Մարզի բնակչությունում մինչև 15 տարեկանները կազմում էին ամբողջ բնակչության 45.2%-ը։ Գրեթե նույնքան էր նաև 15-59 տարիքային խումբը՝ 45.05%, իսկ 60 և ավելի տարիքային խմբերը կազմում էին ամբողջ բնակչության 9.7%-ը։

Ատենախոսության երրորդ՝ «**Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը 1940-1950-ական թթ.»** գլխում ներկայացված են հիշյալ ժամանակաշրջանում ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնները, ԼՂԻՄ ժողովրդագրական հատկանիշներն ըստ 1959 թ. համամիութենական մարդահամարի տվյալների և ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի իրականացրած ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականությունը։

1940-1950-ական թթ. ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնների շարքում հարկ է առանձնացնել Հայրենական մեծ պատերազմը, 1949 թ. հայ բնակչության աքսորը, 1948-1953 թթ. Խորհրդային Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը ԼՂԻՄ-ում, ինչպես նաև Ադրբեջանի ժողովրդագրական քաղաքականության դրսևորումները։ Հայրենական մեծ պատերազմում ինքնավար մարզի բնակչության լայնածավալ մասնակցությունը (ավելի քան 45 հազար մարդ) և մեծաքանակ անվերադարձ կորուստները (շուրջ 22 հազար մարդ) խիստ բացասական հետևանքներ ունեցան մարզի ժողովրդագրական գործընթացների վրա։ 1949 թ. հայ բնակչության աքսորն իրագործվեց նաև ԼՂԻՄ-ում՝ նպաստելով ամբողջ բնակչությունում հայության թվաքանակի և

տեսակարար կշռի նվազմանը: 1948-1953 թթ. Խորհրդային Հայաստանից ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը ԼՂԻՄ-ում նպատակ էր հետապնդում փոխելու ինքնավար մարզի էթնոժողովրդագրական պատկերը: Դրա հետևանքով ինքնավար մարզում ձևավորվեցին մի շարք ադրբեջանաբնակ գյուղեր: 1940-1950-ական թթ. լայն ծավալներ էր ընդունել ԼՂԻՄ-ից երիտասարդ, վերարտադրողական տարիքի բնակչության հավաքագրումները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանների հետևանք հանդիսացող լայնածավալ արտագաղթը:

Ըստ 1959 թ. մարդահամարի տվյալների՝ ԼՂԻՄ առկա բնակչության թվաքանակը կազմում էր 130406 մարդ, որից գյուղականը՝ 79.3%, (103433 մարդ), իսկ քաղաքայինը՝ 20.7% (26973 մարդ): Ինքնավար մարզի բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 84.4%-ը (110053 մարդ) կազմում էին հայերը: Երկրորդ մեծաթիվ էթնիկ հանրույթը ադրբեջանցիներն էին՝ 17995 մարդ (13.8%), ապա ռուսները (1.4% կամ 1790 մարդ): Այլէթնիկ հանրույթները կազմում էին ամբողջ բնակչության 0.4%-ը (568 մարդ): ԼՂԻՄ արական բնակչությունը կազմում է մարզի բնակչության ընդհանուր թվակազմի 47.3 %-ը (61671 մարդ), իսկ իգական բնակչությունը՝ 52.7 %-ը (68735 մարդ): Տարիքային կառուցվածքում մինչև 15 տարեկանների թվաքանակը կազմում էր ամբողջ բնակչության 36.7 %-ը (47797 մարդ), 15-59 տարիքային խումբը՝ 51.8%-ը (67560 մարդ), իսկ 60 և ավելի տարիքային խումբը՝ 11.6%-ը (15137 մարդ):

Գիտական գրականությունում «ժողովրդագրական ինժեներիա» եզրույթը առաջացել է XX դարավերջին: Ժողովրդագրական ինժեներիան պետության կամ իշխանությունների կողմից ժողովրդագրական հատկանիշների և գործընթացների (էթնիկ կազմ, սեռատարիքային կառուցվածք, տեղաբաշխում, տեղաշարժեր) կառավարումն է՝ հիմնականում վիճելի համարվող տարածքի վրա իշխանությունը ամրապնդելու, մեկ էթնիկ խմբի քանակական, տնտեսական և քաղաքական գերազանացությունը հաստատելու համար: Ժողովրդագրական ինժեներիայի իրագործման հիմնական միջոցներից են սահմանային փոփոխությունները, տնտեսական ճնշումները և խթանները, ինչպես նաև իշխանությունների կողմից իրագործված բնակչության տեղաշարժերը: Հիշյալ մեթոդները լայնորեն կիրառվել են ԼՂԻՄ-ում Խորհրդային Ադրբեջանի կողմից 1920-1950-ական թթ.:

Եզրակացություններում ամփոփվել են կատարված ուսումնասիրության արդյունքները և մեր կողմից արված եզրահանգումները.

1. 1921 թ. գյուղատնտեսական մարդահամարին բնութագրական էին կազմակերպական և բովանդակային մի շարք թերություններ, որոնց պատճառով այդ վիճակագրության տվյալները պետք է ընդունել որոշակի վերապահումներով: Ըստ մարդահամարի արդյունքների՝ ԼՂԻՄ գյուղական բնակչությունը գրեթե ամբողջապես միատարր հայկական էր:
2. 1920-ական թթ. առաջին կեսին Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոններն էին հիշյալ ժամանակաշրջանում սոցիալ-տնտեսական անբարենպաստ դրության հետևանք հանդիսացող լայնածավալ արտագաղթը, թյուրք բնակչության շրջանում տարածված (կիսա)քոչվորական կացութաձևը, ինչպես նաև ԼՂԻՄ ձևավորումից հետո Ադրբեջանի կողմից իրագործվող ժողովրդագրական քաղաքականությունը: Դրա դրսևորումներն էին վարչատարածքային տարբեր փոփոխություններով հայկական ինքնավարության տարածքի կրճատումները, Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի միջև անմիջական սահմանակցության բացառումը, Շուշիի շրջանի առանձնացումը որպես վարչական միավոր, Շուշիի հայ բնակչության վերադարձի

խոչընդոտումը և այնտեղ թյուրք բնակչության վերաբնակեցումը, Շուշիի շրջանի տնտեսական զարգացման ծրագրերը։

3. 1926 թ. մարդահամարի տվյալները հնարավորություն են տալիս բացահայտելու ԼՂԻՄ բնակչության հիմնական ժողովրդագրական հատկանիշները՝ խորհրդային կարգերի հաստատման սկզբնական շրջանում։ Մարզի էթնիկ կազմը գերազանցապես հայկական էր։ Թվաքանակով երկրորդ էթնիկ հանրույթը թյուրք-ադրբեջանցիներն էին, ապա ռուսները։ Ըստ սեռային կազմի մարզի բնակչությունը բաշխված էր գրեթե հավասարապես, իսկ տարիքային կառուցվածքին բնութագրական էր պրոգրեսիվ բնույթը։

4. 1920-ական թթ. երկրորդ կեսին և 1930-ական թթ. ինքնավար մարզի ժողովրդագրական գործընթացները պայմանավորող գործոնները խմբավորվում են երկու մասի։ Առաջինը ներառում է համամիութենական սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական գործընթացները, մասնավորապես՝ գյուղատնտեսության կոլեկտիվացումը, արդյունաբերացումը և 1930-ական թթ. վերջերի զանգվածային բռնաճնշումները։ Այս խմբի գործոններն առավելապես նպաստեցին մարզի ուրբանիզացիայի մակարդակի, քաղաքային բնակչության, մասամբ՝ արտագաղթի ծավալների աճին։

5. Գործոնների երկրորդ խումբն ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող ժողովրդագրական քաղաքականությունն էր։ Այդ քաղաքականության դրսևորումներն էին վարչատարածքային փոխակերպումների միջոցով մարզի տարածքի կրճատումը, մի շարք հայկական բնակավայրերի բռնակցումը հարևան ադրբեջանական վարչամիավորներին, քոչվորական կացութաձևի վերացման և նստակեցության հաստատմանն ուղղված միջոցառումները, թյուրքական բնակավայրերի ձևավորումը, վերջիններիս սոցիալ-տնտեսական արտոնությունների հատկացումը, տնտեսական «հիմնավորումներով» մարզի հայ բնակչության վերաբնակեցումները Միլի ու Մուղանի հարթավայրեր, աշխատուժի հավաքագրումները։ Գործոնների երկրորդ խմբի հետևանքը մարզի բնակչության թվաքանակի, էթնիկ կազմի և սեռատարիքային կառուցվածքի փոխակերպումն էր։

6. Համամիութենական երկրորդ՝ 1939 թ. մարդահամարի տվյալներով մարզի բնակչությունը նախորդ մարդահամարի համեմատությամբ նկատելիորեն ավելացել էր։ Զգալի աճ էր արձանագրել հատկապես քաղաքային բնակչությունը՝ հիմնականում պայմանավորված մարզում ծավալված արդյունաբերացման գործընթացով։ Մարզի էթնիկ կազմում պատկերը շարունակում էր գերազանցապես հայկական մնալ։ Իրենց թվաքանակով հայ բնակչությանը հաջորդում էին ադրբեջանցիները և ռուսները։ Ինքնավար մարզի սեռային կազմն բաշխված էր գրեթե հավասարապես, իսկ տարիքային կառուցվածքին բնութագրական էր պրոգրեսիվ բնույթը։

7. 1940-1950-ական թթ. ԼՂԻՄ ժողովրդագրական գործընթացները պայմանավորված էին ինչպես Խորհրդային Միության ռազմաքաղաքական գործոններով, այնպես էլ ադրբեջանական իշխանությունների կողմից իրագործվող ժողովրդագրական քաղաքականության դրսևորումներով։ Գործոնների առաջին խումբը ներառում է Հայրենական մեծ պատերազմը և 1949 թ. հայ բնակչության զանգվածային աքսորը։ Պատերազմի ժողովրդագրական հետևանքները հանդիսացան մարզի բնակչության թվաքանակի զգալի կրճատումը, ծնելիության մակարդակի նվազումը, մահացության մակարդակի աճը, սեռատարիքային կազմի փոփոխությունը, բնակչության ժողովրդագրական ծերացումը։ 1949 թ. հայ բնակչության աքսորը, մարզի ժողովրդագրական

պատկերը պայմանավորող այլ գործոնների համակցությամբ, նպաստեց հայ բնակչության թվաքանակի և տեսակարար կշռի նվազմանը մարզի ամբողջ բնակչությունում։

8. ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնների երկրորդ խումբը ներառում է հետպատերազմյան տարիներին ադրբեջանական բնակչության վերաբնակեցումներն ինքնավար մարզում, աշխատուժի հավաքագրումները, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման դանդաղեցումը, դրա հետևանքով սկզբնավորված լայնածավալ արտագաղթը։ Ադրբեջանի ժողովրդագրական քաղաքականության հիմնական հետևանքներն էին մարզի բնակչության թվաքանակի, էթնիկ պատկերի, սեռատարիքային կազմի փոխակերպումը։

9. 1959 թ. մարդահամարի արդյունքներով ինքնավար մարզի բնակչությունը զգալիորեն նվազել էր նախապատերազմյան մարդահամարի համեմատությամբ։ Էթնիկ կազմով ԼՂԻՄ-ը շարունակում էր ճնշող մեծամասնությամբ մնալ հայկական։ Երկրորդ մեծաթիվ էթնիկ հանրույթը ադրբեջանցիներն էին, ապա՝ ռուսները։ Միջմարդահամարային ժամանակաշրջանում մարզի բոլոր էթնիկ հանրույթների թվաքանակի և հարաբերական ցուցանիշների զգալի նվազմանը հակընթաց տեղի էր ունեցել ադրբեջանական բնակչության թվաքանակի և տեսակարար կշռի նկատելի աճ։ Փոփոխության էր ենթարկվել նաև մարզի բնակչության սեռատարիքային կառուցվածքը։ Ինքնավար մարզում իգական բնակչությունը զգալիորեն գերակշռում էր արական բնակչությանը։ Մարդահամարն արձանագրեց նաև մարզի բնակչության տարիքային կառուցվածքում տեղի ունեցած տեղաշարժերը, բնակչության ժողովրդագրական ծերացման գործընթացը։

10. 1926-1959 թթ. միջմարդահամարային ժամանակաշրջանում մարզի բնակչությունն ընդհանուր առմամբ ավելացել էր աննշան չափով (4%-ով)։ Քննարկվող ժամանակաշրջանում մարզի գյուղական բնակչության նվազմանը զուգընթաց տեղի էր ունեցել քաղաքային բնակչության զգալի աճ։ Դա հետևանք էր քաղաքային բնակչության ինչպես բնական, այնպես էլ մեխանիկական աճի՝ պայմանավորված հիմնականում Խորհրդային Միությունում իրագործված արդյունաբերացման քաղաքականությամբ, քաղաքային բնակավայրերում բնակչության զբաղվածությամբ և առավել նպաստավոր սոցիալ-տնտեսական դրությամբ։

11. 1926-1959 թթ. մարզի էթնիկ կազմը զգալիորեն փոխակերպվել էր հօգուտ ադրբեջանական բնակչության։ Հայ բնակչության նվազմանը զուգընթաց արձանագրվել էր ադրբեջանական բնակչության կայուն աճ։

12. Խորհրդային Ադրբեջանի կողմից 1920-1950-ական թթ. ԼՂԻՄ-ում իրագործվել է ժողովրդագրական ինժեներիայի քաղաքականություն, որի նպատակն էր ժողովրդագրական հատկանիշների փոխակերպման միջոցով ինքնավար մարզում հաստատել ադրբեջանական էթնոսի քանակական, քաղաքական և տնտեսական առաջնությունը։ Ինքնավար մարզում ժողովրդագրական ինժեներիայի իրագործման հիմնական մեթոդներն են հանդիսացել սահմանային փոփոխությունները, տնտեսական ճնշումները և խթանները, բնակչության տեղաշարժերը։ Նման քաղաքականությամբ ադրբեջանական կողմը նպատակ ուներ ամրապնդելու իր իշխանությունը ԼՂԻՄ-ում՝ տարածքի էթնիկ միատարրությունը վերացնելու, հայության թվաքանակը նվազեցնելու և ադրբեջանական բնակչության թվաքանակը ավելացնելու միջոցով։

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրատարակումները

1. Հովհաննիսյան Գ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը 1920-ական թթ. սկզբներին, «Գիտական Արցախ», 2020, № 4 (7), էջ 16-23:
2. Հովհաննիսյան Գ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բնակչությունը ըստ 1926 թ. համամիութենական մարդահամարի տվյալների, «Պատմություն և մշակույթ», 2020, № 2, էջ 125-133:
3. Հովհաննիսյան Գ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական գործընթացները 1920-ական թթ. երկրորդ կեսին - 1930-ական թթ., «Պատմություն և մշակույթ», 2021, № 1, էջ 74-83:
4. Оганнисян Г., Население Нагорно-Карабахской Автономной области по Всесоюзной переписи 1939 г., «Բանբեր Հայաստանի արխիվների», 2021, № 2, էջ 87-97:
5. Հովհաննիսյան Գ., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդագրական պատկերը պայմանավորող գործոնները 1940-1950-ական թթ. «Գիտական Արցախ», 2022, № 3 (14), էջ 35-48:
6. Hovhannisyan G., Population of the Nagorno-Karabakh Autonomous Oblast According to the All-Union Census of 1959, «Պատմություն և մշակույթ», 2022, № 2 (18), էջ 105-116:

ОГАННИСЯН ГАЯНЕ СЛАВИКОВНА

ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА НАГОРНОГО КАРАБАХА В 1920-1950-Е ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 30-го мая 2023 г. в 13^{00} часов на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Основная цель данного исследования - выявить демографическую картину Нагорного Карабаха[32] и выделить факторы, определяющие ее в 1920-1950-е гг.

В исследовании рассматриваются численность, распределение, этнический состав, половозрастная структура населения Нагорно-Карабахской Автономной Области в рассматриваемый период. Представлены уровни рождаемости и смертности населения НКАО, внутренние и внешние перемещения населения, их основные направления. В диссертации также рассматриваются факторы, определяющие демографические процессы в НКАО, представлены проявления азербайджанской демографической политики в НКАО и их последствия.

Основными источниками исследования являются итоги советских переписей, статистические ежегодники и бюллетени, архивные документы. Также широко использовались периодические материалы, мемуары и профессиональная литература. В диссертации использовалась как количественная, так и качественная методология исследования. Для анализа демографических процессов использовались статистические и математические методы. Использовались методы анализа, синтеза, обобщения, индукции и дедукции, периодизации, а также графические методы.

Факторы, определившие демографические процессы в автономной области в 1920-1930-е годы, делятся на две группы. К первой группе относятся общесоюзные социально-экономические, общественно-политические процессы, в частности, коллективизация, индустриализация и массовые репрессии конца 1930-х гг. Факторы этой группы в наибольшей степени способствовали росту уровня урбанизации области, численности городского населения и отчасти увеличению эмиграции. Второй группой факторов стала демографическая политика, проводимая властями Азербайджана. Проявлениями этой политики стали сокращение территории области путем административно-территориальных преобразований, исключение

[32] Нагорный Карабах - историко-географический регион, образующий северо-восточную часть Армянского нагорья и юго-восточную часть горной системы Малого Кавказа. Нагорно-Карабахская Автономная Область (НКАО) - административно-территориальная единица, образованная в 1923 году на части территории Нагорного Карабаха.

прямой границы между Советской Арменией и НКАО, образование Шушинского района, недопущение возвращения армянского населения в Шуши, политика тюркизации Шушинского района, присоединение ряда армянских поселений к соседним азербайджанским административным единицам, меры, направленные на ликвидацию кочевого образа жизни и установление оседлости, образование тюркских поселений, наделение последних социально-экономическими привилегиями, переселение армянского населения области на Мильскую и Муганскую равнины. Результатом действия факторов второй группы стала трансформация численности, этнического состава и половозрастной структуры населения области.

В 1940-1950-х годах факторы, определяющие демографические процессы в НКАО, можно разделить на две группы. Первая группа относится к общесоюзным военно-политическим процессам и включает в себя Великую Отечественную войну и депортацию армянского населения в 1949 г. Демографическими последствиями войны стали значительное сокращение населения области, снижение рождаемости, увеличение смертности, изменение половозрастного состава, демографическое старение населения. Депортация армянского населения в сочетании с другими факторами, определяющими демографическую картину области, способствовало уменьшению численности и удельного веса армянского населения во всем населении области. Ко второй группе факторов, определяющих демографическую картину НКАО, относятся инициативы азербайджанских властей, такие как переселение азербайджанского населения в автономную область в послевоенные годы, набор рабочей силы, замедление социально-экономического развития области, а также масштабная эмиграция в связи с социально-экономической ситуацией. Основными последствиями демографической политики Азербайджана стали трансформация численности, этнического состава и половозрастной структуры населения области.

В 1920-1950-х годах Советский Азербайджан проводил в НКАО политику демографической инженерии, целью которой было установление количественного, политического и экономического превосходства азербайджанского этноса в НКАО. Основными азербайджанскими методами демографической инженерии были изменение границ, экономическое давление и стимулы, а также перемещение населения.

GAYANE SLAVIK HOVHANNISYAN

DEMOGRAPHIC PICTURE OF NAGORNO-KARABAKH IN THE 1920s-1950s

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The Defense of the Dissertation will be held on May 30, 2023, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

The main purpose of this dissertation is to reveal the demographic picture of Nagorno-Karabakh[33] and highlight the factors that determined it in the 1920s-1950s.

The research studies the number, distribution, ethnic composition, age and gender structure of the population of the Nagorno-Karabakh Autonomous Region in the period under review. The birth and death rates of the population of the NKAO[34], internal and external population movements, their main directions are presented. The dissertation also examines the factors that determine the demographic processes of the NKAO, the manifestations of the Azerbaijani demographic policy in the NKAO and their consequences.

The main sources for the research are Soviet censuses results, statistical yearbooks and bulletins, archival documents. Periodical materials, memoirs and professional literature were also widely used. The dissertation used both quantitative and qualitative research methodology. Statistical and mathematical methods were used for the analysis of demographic processes. Methods of analysis, synthesis, generalization, induction and deduction, periodization, as well as graphical methods were used.

The factors that determined the demographic processes of the autonomous region in the 1920s-1930s are divided in two groups. The first group includes all-union socio-economic, socio-political processes, in particular, the collectivization, industrialization and mass repressions in the late 1930s. The factors of this group mostly contributed to the growth of the level of urbanization of the region, the number of urban population and partly the increase of emigration. The second group of factors was the demographic policy pursued by the Azerbaijani authorities. The manifestations of this policy were the reduction of the territory of the region through administrative-territorial transformations, the exclusion of a direct border between Soviet Armenia and the NKAO, the formation of the Shushi region, the prevention of the return of the Armenian population of Shushi, the policy of Turkification of the Shushi region, the annexation of a number of Armenian settlements to neighboring Azerbaijani

[33] Nagorno-Karabakh is a historical-geographical region that forms the northeastern part of the Armenian Highlands and the southeastern part of the Lesser Caucasus mountains. The Nagorno-Karabakh Autonomous Region is an administrative-territorial unit formed in 1923 on part of the territory of Nagorno-Karabakh.

[34] Abbreviation of the Russian name "Nagorno-Karabakh Autonomous Region".

administrative units, measures aimed at the elimination of the nomadic lifestyle and the establishment of a sedentariness, the formation of Turkic settlements, endowing the latter with socio-economic privileges, resettlement of the Armenian population of the region to the Mil and Mughan plains. The result of the factors of the second group was the transformation of the number, ethnic composition and gender and age structure of the region's population.

In the 1940s-1950s, the factors determining the demographic processes of NKAO can be divided into two groups. The first group refers to all-Union military-political processes and includes the Great Patriotic War and the deportation of the Armenian population in 1949. The demographic consequences of the war were a significant reduction in the population of the region, a decrease in the birth rate, an increase in mortality, a change in the gender and age composition, and demographic aging of the population. The deportation of the Armenian population, combined with other factors that determined the demographic picture of the region, contributed to a decrease in the number and proportion of the Armenian population in the entire population of the region. The second group of factors determining the demographic picture of the region includes the initiatives of the Azerbaijani authorities, such as the resettlement of the Azerbaijani population in the territory of the autonomous region, the recruitment of labor force of region, the slowdown in the socio-economic development of the region, as well as large-scale emigration due to the socio-economic situation. The main consequences of the demographic policy of Azerbaijan were the transformation of the number, ethnic composition and gender and age structure of the region's population.

In the 1920s-1950s, Soviet Azerbaijan pursued a policy of demographic engineering in the NKAO, the purpose of which was to establish the quantitative, political and economic superiority of the Azerbaijani ethnos in the NKAO by transforming demographic characteristics. The main Azerbaijani methods of demographic engineering were border changes, economic pressures and incentives, and population transfers.